

## ՀԱՅՈՑ ԱՄԱՆՈՐ

«Ո՞ր սայր ինձ զծովը ծխանի և զառաւօտն նաւասարդէ,  
զվազելն եղանց և զվազելն եղջերուաց. մեք փող հա-  
րուաք և թմրկի հարկանէաք.»

Ո՞ւր, ո՞վ մարդիկ, շտապու՞մ էք խուռներամ և հապճեպով,  
Ո՞ւր էք վազում ձեռներդ լի մայր բնութեան տուրքերով.  
Նաւասարդի մէկն է այսօր, և դնում էք տօնելու.  
Մի՞րդ ու ծաղկով շքեղ տօնը Ամենաբեղ աստրծու:  
Հայ աշխարհի բնութիւնն հարուստ, դաշտօրայքն են ծաղկազարդ,  
Այգիները մրգերով լի, հողն արգաւանդ և պարարտ  
եւ դուք, չքնաղ հայ օրիորդներ, ծաղիկներից այդ սիրուն  
Պսակներ էք բոլորելու Ամենաբեղ ձեր տիրուն,  
Թէ՛ դուք ընքոյձ ձեր մատներով ածելու էք լիուլի  
Ձեր սիրասուն եղբայրների բաժակներում հին գինի.  
Թէ՛ սեղան էք պատրաստելու Ամենաբեղ Աստծուն,  
Որ նա սփռէ իւր հովանին ձեր բարեբեր արտերում:  
Աձէք, քորեր, ահա եկան ձեր եղբայրները յոգնած,  
Ձիարշաւից, մրցումներից հանգստութեան կարօտած.  
Կազդուրեցէք ձեր տաք շնչով դուք նրանց խոնջ բազուկներ,  
Տուէք նրանց, տուէք դինի, տուէք և քաղցր համբոյրներ,  
Որ Աստուածն էլ Ամենաբեղ, խնամակալն հայ երկրի,  
Տեսնելով ձեր սէրն անարատ՝ հոգով ցնծայ ու բերկրի:  
Երգիչները հայ աշխարհի՝ տաղանդաւոր և համեստ՝  
Հին դիւցազանց մեծ գործերին անվերջ կարդում են գովեստ.  
Յիշում են նրանք իրանց երգում անուններ Հայկ ու Արամ,  
Տիգրան, Վահագն ու Արտաշէս և դրանց փառքն անթառամ.  
Շուք են տալիս ամանորի հայրենաւանդ հին տօնին,  
Եւ գովում են ամէն ովքեր հայրենեաց հետ կապ ունին.  
Գովում են նրանք հայրենասէր քաջ զինուորին անձնուէր,  
Հայ տանտիկնոջ, հայ պատանուն, հայ մշակին ջանասէր,  
Եւ երգելով փառք ու պատիւ Ամենաբեղ աստրծուն՝

Հայ աշխարհի բնութեան համար նրանից խնամք են հայցում.  
Հայ օրիորդներ, պսակեցէք դուք ճակատն հայ երգողի,  
Որ յաւիտեան նա իր երգում ձեր անունը ներբողի:

Արեգակը հորիզոնում փողփողում է սոթագին  
Եւ մրգերով շրջապատուած կարծես ժպտում է բազինն,  
Ուր քրմերը միաբերան երգում են փառք ու պատիւ  
Ամենաբեզ մեծ աստրժուն ամանորի այս առթիւ.  
Եւ խմում են մարդիկ գինին բաժակներով լիուլի,  
Եւ ասում են, և պարում են խմբովին և մի առմի:  
Քրմապետը ձայն է տալիս գինու բաժակը ձեռքին՝  
«Հայ ժողովուրդ, երկրպագիր դու քո տիրոջ՝ Կրտսէին.  
«Մն, ասում է, քեզ պարգևեց պայծառ երկինք, յորդ անձրև,  
«Մն խնայեց քեզ կարկուտից, ծագեց քեզ լոյս ու արև»:  
Եւ ժողովուրդը գոչում է՝ բազուկները տարածած՝  
«Օրհնեալ լինի Ամենաբեզ աստուածը մեր միշտ զԹած»:

Եւ քրմերի դասակարգից մի երկրորդ մեծ պաշտօնեայ  
Ձայն է տալիս ձեռին բռնած զինու բաժակը ոսկեայ.  
«Հաւատարիմ հայ ժողովուրդ, կրօնասէր, շերմեռանդ,  
«Եմում եմ այս քո իսկ կենաց, որ հինաւուրց այս աւանդն  
«Անխախտ պահես և դարերով ժառանգութիւն միշտ թողնես  
«Ձաւակներիդ, որ նրանք էլ գան կատարեն սոյն հանդէս:  
«Քո աշխարհը, հայ ժողովուրդ կանգուն մնայ յաւիտեան,  
«Կանգուն մնայ քո տունն ու տեղ, քո այգին ու անդաւատան.  
«Եւ ինչպէս քո հողի վրայ բուսած ծառերն ու ծաղկունք  
«Մնաս և դն մշտադալար, չտեսնես ցաւ ու արտասունք»:  
Լսեց ճառը պերճախօսի՝ միաբերան ձայն տուին.  
«Կեցցէ յաւէտ մեր վեհ կրօն, որ մեր նախնիք մեզ թողին»  
Եւ խանդավառ բերկրանքով լի՝ համբոյր տուին միմեանց՝  
Քաջ համոզուած թէ կրօնն այդ մնալու էր միշտ անանց:

Անցան դարեր, կործանուեցաւ հայ բազինը հնօրեայ,  
Քայց ոչ երբեք մոռացուեցաւ ճոխ պաշտամունքը նորա.  
Տասնեակ դարեր երկարուձիգ կատարուեցաւ շարունակ  
Հայ աշխարհում ամանորի սոյն հանդէսը փառունակ.  
Դարեր երկար և անընդհատ հայ կոյսն ու հայ պատանին  
Պճնուեցան պսակազարդ՝ ամանորի այս տօնին.  
Մոռանում էր հայ մշակը իւր քրտինքին ու տառապանք,  
Ողջունելիս նորեկ տարուն ստանում էր նա նոր կեանք.  
Կազդուրում էր հայ զինուորը պատերազմում վաստակած  
Ուրախ էր հայ ընտանիքը՝ իր սրբութեամբ հռչակուած.

Ուրախ էր և հայ տէրտէրը յաջորդը հին քրմերի՝  
 Թէպէտ և ոչ մեծ գիտնական բայց հաւատքումն անթերի  
 Եւ երգիչը հայ աշխարհի՝ անցեալն էր դեռ նուագում,  
 Եւ ամբոխից դիւցազնական դափնիներով պսակում:

Անցան սակայն, անցան անդարձ և այդ դարերն երջանիկ,  
 Եւ տեսնում եմ այժմ իմ առաջ ես մի սգաւոր հայրենիք...  
 Նա հիծում է, նա ողբում է հարուածներից օտարի,  
 Ասպարէզ է դառել տխուր հալածանքի, աւարի,  
 Հալածում է հայ տէրտէրը՝ հաւատարիմ իր կոյման,  
 Աւերում է հայ տաճարը իր զարդերով սրբազան.  
 Հալածում է հայ պատանին երկրէ երկիր տարագիր,  
 Հալածում է հայ մշակը իր որդոց հետ սգակիր,  
 Հալածում են մատաղերամ և որբացած հայ մանկունք.  
 Չունին նրանք հայր ու մայրիկ, անվերջ թափում են արտ-  
 սունք.

Հալածում է և պատիւը պարկեշտասուն հայ կոյսի.  
 Էլ տէրը չէ նա սիրասուն-քաջ տղամարդ իր փեսի:  
 Վերացել է հայ աշխարհից և սրբութիւն և ամօթ,  
 Պատուաճանաչ մարդիկ այնտեղ մտնուան քաշում են կարօտ.  
 Մոռացուել է ամանորի պաշտամունքը ցնծալից...  
 Ա՛խ, ո՞վ կարող է աչք բանալ այլ ևս արիւն արտօսրից...  
 Եւ երգիչը հայ աշխարհի մռայլ թախիծը դէմքին՝  
 Պատմում է իր հայրենիքի ցաւն ու վիշտը ամենքին.  
 Աշխարհներ է թափառում նա, կտրում է ծով, ովկիան,  
 Որ իր ողբով ու երգերով քար սիրտն յուզէ մարդկութեան....:

Օ՛ն, սիրելի հայ օրհորդներ և դուք հայոց պատանիք,  
 Թէ սիրում էք որ նորոգուի ձեր կիսաւեր հայրենիք,  
 Թէ սիրում էք որ դարերով անմահ մնայ ձեր անուն,  
 Ուխտեցէք արդ նրան մի օր զոհել ձեր սիրտն ու արիւն:  
 Մ. Վ. Մ.